

Յ Ե Ի Ե Լ Ո Ի Ե Ծ
Ն Ե Յ Ե Ս Տ Ե Ն
 Լ Ր Ա Գ Ի Ո Յ

Երեկուան Վիեննայի փոսթայով հետեւեալ լուրը առինք :

Երբոր կայսրը իմացաւ որ մաճառները սպաններ են ՝ ամպերկ զորապետը , ուղեց որ ազգային ժողովքնին աւրուի , և բոլոր խրովաթ մաճառ և թռանսիլվանիայի զորաց հրամանատարութիւնն ալ Նլաճիչ զորապետին յանձնուի որ երկար ժամաւ նակէ 'ի վեր մաճառներուն դէմ կը պատերազմէր և Վիեննայէն այս զորապետին օգնութեան զօրք խաւրուի : Երբոր զօրքը կը մեկնէր Վիեննայէն ժողովուրդը դէմ կեցաւ որ չըմեկնի , ուստի մեծ խռովութիւն մըն է փրթաւ մայրաքաղաքին մէջ : Ազգային պահպան զօրքը , Ահադեմեան Վէդէոն կոչուած զօրքը և ժովուրդը կայսերական զօրաց հետ պատերազմելով երկու կողմէն բաւական կոտորած եղաւ : Կառավարութեան բոլոր նախարարները պարտաւորեցան իրենց հըրաժարականը տալու . ազգային ժողովքը որ կայսրը վերցունելու կ'աշխատէր վերահաստատեցաւ և անխափան պիտի զբաղի ազգային գործքերով : Պատերազմի պաշտօնեայ Պ . Վթուռը ժողովուրդին ձեռքն ինչալուն պէս իսկոյն տարին լապտերի մը երկաթէն վար կախեցին , Պաօլա անուանի զորապետն ալ սպաննեցին , կայսրն ալ ասոնք տեսնալով ստիպուեցաւ Վիեննայէն դարձեալ հեռանալու դէպ 'ի Լէննա :

Ժողովուրդին վախն այն է որ կայսրը ինչպէս որ կ'ուզէ , չըլլայ որ խրովաթներուն ու սըռֆերուն ուժ տալով մաճառները տկարացունէ և անոնց ահամայ տուած ազատութիւնները ետ առնէ , ասանկով ինքը իւր առաջին ուժը ստանալով ետքն ալ դառնայ իրենց ստացած ազատութիւններն ալ ձեռքերնուն առնելու աշխատի :

Փոսթան ելած ժամանակը դեռ խռովութիւնը հանդարտած չէ եղեր , խուճի խուճի ժողովուրդը փողոցները պարտելով կառավարութեանը ու կայսեր աչքը վախցունելու խօսքեր կ'ընեն եղեր :